Հաստատված է
«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ
Տնօրենի կողմից
Հովակ Հովակիմյան
02.04.2024

ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի համարը	Տարբերակի համարը	ՆԻԱ սեփականատերը	ՆԻԱ փոփոխության կարգավիճակը
1	2	Բեք օֆիս, Մանրածախ հաճախորդների սպասարկման բաժին	Նոր խմբագրություն

ԵՐԵՎԱՆ 2024

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է «ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կողմից դիլերային գործարքներ կնքելու պայմանները (այսուհետ՝ «Պայմաններ»):

1.2. Ընկերությունը գործառնություններն իրականացնում է տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ համապատասխան իրավական ակտերով, ինչպես նաև Ընկերության կողմից ընդունված ներքին ակտերով:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Գնորդ՝ գործարքի կատարման օրը սեփականության իրավունքով արժեթղթեր ձեռքբերող:

2.2. Վաճառող՝ գործարքի կատարման օրը արժեթղթեր օտարող:

2.3. Պայմանագիր՝ դիլերային պայմանագրեր կնքելու պայմաններին միանալու պայմանագիր:

2.4. Արժեթուղթ՝ Պայմանագրով սահմանված առուվաճառքի առարկա:

2.5. Առաջարկ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից դիլերային պայմանագիր կնքելու վերաբերյալ էլեկտրոնային առևտրային հարթակում՝ «Tradernet»-ում և/կամ «Tradernet»-ում գրանցված էլեկտրոնային փոստից ներկայացված առաջարկ:

2.6. Չեղարկում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից էլեկտրոնային առևտրային հարթակում ներկայացված Առաջարկի հետ կանչ:

2.7. Էլեկտրոնային առևտրային հարթակ՝ Ընկերության կողմից կառավարվող էլեկտրոնային համակարգ:

2.8. Աշխատակից՝ Ընկերության աշխատակից լիազորված կնքել/հաստատել Պայմանագիրը:

2.9. Կողմեր՝ **Գնորդ**-ֆիզիկական կամ իրավաբանական անձ և **Վաճառող**-Ընկերությունը, **Գնորդ**-Ընկերությունը և **Վաճառող**-ֆիզիկական կամ իրավաբանական անձը :

2.10. Բրոքերային հաշիվ՝ Ընկերության կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար բացված հաշիվ:

3. ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

3.1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է Առաջարկ սահմանված պայմաններով կնքել Պայմանագիր (Հավելված 1):

3.2. Աշխատակիցն ուսումնասիրում է Առաջարկը և հաստատում կամ մերժում է այն:

3.3. Աշխատակիցը պարտադիր տեղեկացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին Առաջարկի հաստատման կամ մերժման վերաբերյալ, մերժման դեպքում ներկայացնելով հիմնավորում\պատճառը:

3.4. Ֆիզիկական կամ իրավաբանական անձը կարող է ներկայացնել Չեղարկում մինչև Ընկերության կողմից Առաջարկի հաստատելը:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Դիլերային գործարքներն իրականացվում են համապատասխան պայմանագրի կնքմամբ (արժեթղթերի առուվաճառքի պայմանագիր) համաձայն Հավելված 1: Առուվաճառքի պայմանագրի կնքմամբ գործարքներն իրականացվում են պայմանագրում նշված Արժեթղթի առուվաճառքի նախապես համաձայնեցված էական պայմանների համաձայն (Հավելված 1): Դիլերային գործարքների առարկա կարող է հանդիսանալ միայն այն Արժեթուղթը, որի նկատմամբ դրա սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն:

4.2. Սույն Պայմաններով նախատեսված դրույթները ընդունելու վերաբերյալ, համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի, Կողմերի միջև կնքվում է Դիլերային գործարքներ կնքելու պայմաններին միանալու պայմանագիր (Հավելված 1):

4.3. Գնորդը պարտավորվում է նախատեսված կարգով Արժեթղթի համար վճարել Վաճառողին սահմանված գործարքի գումարը:

4.4. Վաճառողը պարտավորվում է նախատեսված կարգով վաճառել Գնորդին Հավելված 1 սահմանված Արժեթուղթը:

4.5. Եթե գործարքի կողմեր են հանդիսանում **Գնորդ**-ֆիզիկական կամ իրավաբանական անձը և **Վաճառող**-Ընկերությունը, ապա՝

(a) Գնորդ-ֆիզիկական կամ իրավաբանական անձը պարտավոր է սահմանված օրը ապահովել իր Բրոքերային հաշվին Հավելված 1 սահմանված գործարքի գումարի առկայությունը:

(b) Վաճառող-Ընկերությունը պարտավորվում է Հավելված 1 նշված ժամկետներում տրամադրել Գնորդ-ֆիզիկական կամ իրավաբանական անձին սահմանված Արժեթուղթը սահմանված քանակությամբ/ծավալով:

(c) Գնորդ-ֆիզիկական կամ -իրավաբանական անձը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Վաճառողը-Ընկերությունը սառեցնի Գնորդ-ֆիզիկական կամ իրավաբանական անձի Բրոքերային հաշվին առկա Հավելված 1 սահմանված գործարքի գումարը:

(d) Գնորդ-ֆիզիկական կամ -իրավաբանական անձը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Վաճառողը-Ընկերությունը, անակցեպտ կարգով Հավելված 1 նշված օրը գանձի սահմանված գործարքի գումարը Գնորդ-ֆիզիկական կամ -իրավաբանական անձի Բրոքերային հաշվից:

4.6. Եթե գործարքի կողմեր են հանդիսանում **Գնորդ**-Ընկերությունը և **Վաճառող**-ֆիզիկական կամ -իրավաբանական անձը, ապա՝

(a) Վաճառող-ֆիզիկական կամ -իրավաբանական անձը պարտավոր է Հավելված 1 սահմանված օրը Բրոքերային հաշվին ապահովել Արժեթղթի առկայությունը:

(b) Գնորդ-Ընկերությունը, պարտավորվում է Հավելված 1 նշված օրը վճարել սահմանված գործարքի գումարը Վաճառող-ֆիզիկական կամ իրավաբանական անձի Բրոքերային հաշվին:

4.7. Նախատեսված վճարումները (փոխանցումները) պետք է ստացվեն համապատասխան գործառնության օրը մինչև վճարման (փոխանցման) ստացման վայրում այդ վճարման (փոխանցման) համար սահմանված ժամկետը:

4.8. Եթե վճարումը (փոխանցումը) ստացվել է համապատասխան գործառնության օրը, սակայն ավելի ուշ քան նախատեսված է 3.1 կետով, ապա այդ վճարումը (փոխանցումը),համարվում է ստացված հաջորդ աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Եթե Կողմերից որևէ մեկը ժամանակին չի կատարում սույն Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները, ապա մյուս Կողմին վճարում է տուգանք հետևյալ գումարի չափով՝ 100,000.00 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով գումարը և տույժ՝ չվճարված գումարի կամ չփոխանցված արժեթուղթ(եր)ի անվանական արժեքի տարեկան 1.00 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր (ներառյալ առաջին) օրացուցային օրվա համար:

5.2. Եթե Կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել սույն Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները, ապա մյուս կողմը պարտավոր չէ կատարել պարտավորության իր մասը: Նման դեպքերում խախտող կողմը վճարում է տուգանք Հավելված 1 նախատեսված գործարքի գումարի 5.00 տոկոսին համարժեք չափով, ինչից հետո գործարքը համարվում է լուծված:

5.3. Սույն Պայմաններով նախատեսված վճարումները (փոխանցումները) պետք է կատարվեն դրանց հիմքի առաջացման օրվան հաջորդող երկու բանկային օրվա ընթացքում, ինչի դեպքում կողմերն ազատվում են լրացուցիչ վնասների հատուցման պարտականությունից: Բոլոր տույժերը և տուգանքները վճարվում են վճարման արժույթով կամ ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական փոխարժեքով:

5.4. Կողմերը պատասխանատու են սույն Պայմաններով նախատեսված իրենց պարտավորությունները ժամանակին չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար, եթե պարտավորությունները խախտած կողմը չապացուցի, որ պարտավորությունների ժամանակին պատշաճ կատարումն անհնար է եղել անկանխատեսելի անհաղթահարելի ուժի պատճառով (որը, սակայն, չի ներառում տեխնիկական սարքերի անսարքությունը) և ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները պարտավորությունը պատշաճ կատարելու, ինչպես նաև Պայմանագրի մյուս կողմից ստացվածը վերադարձնելու և անհաղթահարելի ուժի հետևանքով պարտավորությունների կատարման անհնարինության մասին տեղեկացնելու ուղղությամբ:

5.5. Պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (պայմանագրի՝ կողմի կողմից ստորագրված օրինակը) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է Պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիրը կնքելիս, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային պայմանագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչը կողմի կողմից ձեռագիր ստորագրված պայմանագիրը:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Բոլոր տոկոսագումարները հաշվարկվում են օրական կտրվածքով՝ օրական տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք ընդունելով 365 օր օրացուցային տարին:

6.2. Սույն Պայմանները ուժի մեջ է մտնում Հավելված 1 ստորագրման կամ հաստատման պահից և գործում են մինչև գործարքի փաստացի կատարումը: Առուվաճառքի գործարքներն իրականացվում են հետևյալ ընթացակարգով.

a) Կողմերի միջև համագործակցության պայմանները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, որի համաձայն Համաձայնագրի ստորագրումը պարտադիր չէ, և Համաձայնագիրն ունի նույն իրավաբանական ուժը և սահմանում է նույն իրավունքները ու պարտականությունները, ինչպես հասարակ գրավոր ձևով կնքված Համաձայնագիրը: Այն դեպքում, երբ Հաճախորդները նախընտրում են ունենալ սույն Համաձայնագրի ստորագրված պատճենը, ապա Հաճախորդը կարող է դրանք տպել, ստորագրել երկու օրինակից և ուղարկել Ընկերությանը՝ նշելով իր փոստային հասցեն: Համաձայնագրի պատշաճ ստորագրված և Ընկերության կողմից կնիքով վավերացված երկրորդ օրինակը կուղարկվի Հաճախորդի կողմից նշված փոստային հասցեին:

b) Գործարքի էական պայմանները համաձայնեցնելուց հետո Կողմերը ստորագրում են (ստորագրումը տեղի է ունենում էլեկտրոնային համակարգի միջոցով հաստատելով պայմանագրի կնքումը) համաձայն Հավելված 1:

c) Ստորագրելով Հավելված 1՝ Կողմերը ընդունում սույն Պայմաններով նախատեսված բոլոր դրույթները:

6.3. Սույն Պայմանները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան --/--/----/ --:--

ԱԱՀ/ ԱՆՎԱՆՈՒՄ, անձնագիր՝, հասցե՝ կամ գրանցման վկայական՝ ՀՎՀՀ՝ (այսուհետ՝ «Վաճառող»), մի կողմից, և

ԱԱՀ/ ԱՆՎԱՆՈՒՄ, անձնագիր՝, հասցե՝ կամ գրանցման վկայական՝ ՀՎՀՀ՝ (այսուհետ՝ «Գնորդ»), մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն միանալու պայմանագիրը հետևյալի մասին.

Արժեթղթի ԱՄՏԾ (ISIN)

Քանակ

Արժույթ

Ուղղություն Առք/վաճառք

Գին

Գործարքի գումար

ներառյալ կուտակված արժեկտրոնի գումար

Ստորագրելով սույն միացման պայմանագիրը՝ Կողմերը հաստատում են, որ կարդացել և ընդունում եմ «ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ Դիլերային գործարքներ կնքելու պայմաններով սահմանված բոլոր դրույթները:

ՎԱՃԱՌՈՂ **ԳՆՈՐԴ**